







ԱՇՈՒՂ ՇԱՀ-ՆԱԶԱՐ

ԱՐԻՒՆՈՏ ԶԱՏԻԿԸ

5925 p.m



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

1911, ԳՐԱԴԱՐԱՆ

Տպագր. ԶԱՐԵՆ Ն. ՊԵՐՊԵՐԵԱՆ



Մարտ ամսոյ վերջերն էր:

Յ. գաւառի Բ. գիւղի մի հետ ընկած տան ճրագները դեռ վառւում էին: Ճրագի առաջ նստած էր մի գեղանի կին, որ թէ գուլպայ էր գործում, և թէ սպասողական հայեացք էր ձգում դէպի անկողինը, դէպի այն անկողինը, որի մէջ նա պառկած էր իր հարսնութեան ժամանակ, և որը այնքան «ուզուրի» էր եղել: Բայց այդ մի քանի երեկոները բացակայում էր նրա սրտի մխիթարանքը, նրա ամուսինը. նրան տեղ պառկած էին երկու փոքրիկ երեխաները, Սոսը և Վարդանիւշը, որոնց երեսի վրայ փայլում էր մանկական անմեղ քրտինքը: Կինը գուլպայ էր գործում ու հոնգուռ հոնգուռ լաց էր լինում:

Նա մէկ էլ աչքերը ուղղեց դէպի լուսամուտը, ու վշտալի հոգիով ասաց.

— Այ անաստուած, անգո՛ւթ, ո՞ւր մնացիր, այս քա՛նի օր եղաւ, դու չ'գիտե՞ս յիթէ որ առանց քեզ օրերս խաւարած կ'ըլնի. ո՞ւր ձգեցիր մե՛զ, ձգեցիր այս անմեղ երեխաներին, որոնք միշտ «Հայրիկ—հայրիկ» են գոռում: Օ՛ Աստուած դիւանիդ մեռնի՛մ, մի քանի զուրուշի համար, ա՛հ ճակատի քրտինք ո՞րքան անուշ ես: Ես հազար անգամ ասացի. Մի գնա՛, Կա՛րօ ջան, մի գնա՛, աղիւղ օր է, թող ես չոր սւ ցամաք հաց ուտեմ, մի գնա՛, արիւնի հոտ է գալիս մեր գաշտերից, ձորերից, լեռներից. նա ինձ չ'լսեց, նա ինձ տխուր կերպով ասաց:

— Չէ՛, Մարօ՛ ջան, Զատիկ է գալիս, Հայի համար Ս. Յարութեան օրը, Ս. Զատիկի տօնը թանգ տրժէ, երեխաներ ունինք Մարօ, երեխանե՛ր. երեխաների համար շատ մեծ ուրախութիւն է Զատիկը տօնել. գնամ աշխատած դրամներս առնեմ Բէյից ո՛ր մենք էլ ուրախ տօնենք Զատիկը, մենք էլ ուրախանանք, մեր օջախը վառւի, մեր օջախիցն էլ մուխ դուրս գայ: Մարօ ջան, ես այս տարի նպատակ ունիմ ուրախանալու, զուարճանալու, որովհետեւ միայն մեր կողմերում «զուլում» չեղաւ...:

Մարօն աչքերը վեր բարձրացրեց ու ասաց.

— Ա՛հ Աստուած իմ, երկու օր մնաց Զատիկին, բայց տասը օր եղաւ դեռ չեկաւ. ի՞նչ պատահեցաւ Աստուած իմ:

Մարօ որպէս խելագար, որպէս լուսնոտ, ելաւ տեղէն, ինքն էլ չգիտեր թէ ինչո՞ւ, մի քանի վայրկեան իր չորս կողմը նայեց, դարձաւ երեխաները, ու ասաց ինքն իրեն.

— Ո՛չ, պէտք է գնա՛մ, պէտք է գնամ փրկեմ նրան, խիղճս ինձ տանջում է, վրէժխնդրութեան հոգին ինձ հանգստութիւն չի տալիս: Ես գիտեմ, ես համոզուած եմ, որ հայ կիներ պէտք է իւր պատուովը մեռնի, նա ասաց. Տէրտէրը պատուիրեց քարոզի ժամանակ. Հայ կնոջ պատիւը իր ամուսինն է, նա ապրում է իւր ամուսնու համար, իւր պատւի համար, իւր թագն ու պսակի համար, եթէ այդ էլ չ'լինի հայ կինը էլ ո՞րի համար պիտի ապրի: Օ՛վ վրէժխնդրութեան Աստուած, ո՞ւր ես, ո՞ւր, մինչեւ ե՞րբ, ինչո՞ւ ստեղծեցիր Հային, հայ գիւղացուն: Չէ՞ որ մեր տէրտէրները, մեր գիտունները ասում էին թէ մարդիկ ծնւում են երջանիկ լինելու համար, չէ՞ որ այս աշխարհը նկարագրւում են որպէս արքայութեան, ո՞ւր է, ո՞ւր է այն մարդկային երջանկութիւնը, չէ՞ որ մեզ էլ միեւնոյն Աստուածը ստեղծեց, մի՞թէ այդ ամենաբարի Աստուածը իւր ստեղծուածներից մի մասին կ'օրրի, իսկ միւս մասին կ'ապարտի, մէկին զօրեղ կ'ստեղծի միւսի գլուխը ջարդելու համար, չէ՞ որ Քրիստոս ասաց. «Բարի արարէք ատելեաց ձերոց»:

Ո՛չ, ո՛չ, պապանձուի՛ր լեզո՛ւ, պապանձո՛ւիր, այդ ի՞նչ եմ ասում, յանցաւորը Աստուած չ'է՛, այլ մե՛նք ենք, ամբողջ մարդկութիւնն է, յանցանքը մեր մէջ պիտի փնտռենք: Աստուած մար-

դուն ստեղծեց, բայց խելք տուաւ, անասուններից զատեց, իւր պատկերքը մեզ տուաւ, մանաւանդ Աստուած մարդուն խիղճ տուաւ, խիղճ, որ թացակայում է մեր միջից, մարդկութեան միջից, ամբողջ աշխարհից:

Մարօն ցանկանում էր գոռալ, ճչալ, իւր ցաւը յայտնել ամբողջ աշխարհին, բայց չէր կարողանում, նրա ծնունդները բռնւում էին, միայն թէ արտասուքը, այդ մեղամագճոտ վշտի մշուշով պատած սրտի իրական աղբիւրի ագններն էր, որ բացուել, ու հոսում էին առանց արգելքի. և որպէս կատաղի ծովի մարգասպան ալիքներ ողողում էին նրա դժգոյն այտերը, որպէս քարացած ժայռի: Նա գլուխը դրել էր իւր կոշտ կոպիտ ձեռքերում ու մտածում էր: Կէս ժամ չանցած մէկ սոսկալի հառաչանք թռաւ, մէկ բան պոկուեց նրա սրտից ու անհետացաւ օդի մէջ, նա սթափուեց ու ասաց.

— Ա՛խ, աւերւի՛ս աշխարհ, այն ի՞նչ օր էր, ի՞նչ երջանիկ օր: Ուղիղ այս ժամանակ էր, այս ժամանակ, արթնցաւ քունէն, ելաւ ինձ էլ արթնցրեց ու ասաց.

— Մարօ, իմ խեղճուկ կնի՛կ, Աստուած խռովել է Հայից... և սկսեց մտածել...

Ես նեղացայ նրա վերայ, ու ասացի.

— Կարօ ջան ի՞նչ ես ասում, միթէ Աստուած կ'նեղանայ իւր ստեղծածի վերայ, Կարօ ջան մեզք գործեցիր, Աստուած կը բարկանայ քեզ վերայ, մեր օջախի վերայ: Նա ինձ պատասխանեց.

— Մարօ՛ ջան, ջարդ կայ ջարդ, Սգանքօլը արիւնի ծով է դարձել, էլ Հայ չմնաց, էլ տուն չմնաց, քանդեցին, Մարօ, քանդեցին:

— Ո՞վ հարցրի, ո՞վ ասաց քեզ Կարօ:

— Մեր Ռէսը, Մարօ՛, Տէր Կրպօն. երկուսն էլ ասացին, ժողովուրդին հաւաքել էին եկեղեցին, այնտեղ Տէր Կրպօն քարոզ խօսեց ու ասաց. «Ի սէր Աստուծոյ, ի սէր մեր տառապեալ ազգի, զաւա՛ններօ, կարիճ եղէ՛ք, երկնքից կրակ պետի թափուի մեր գլխին, մեր գիւղի վերայ, ա՛յնպէս ինչպէս թափուեց ամբողջ Հայաստանի վերայ, պիտի այրւի մեր գիւղը Սոդոմ-Գոմորի պէս, Աստուած մեզ մոռացել է, մեզ պատժում է: Ծո՛ւնկ չօքէք զա-

ւակներս, ծո՛ւնի չոքէք աղօթեցէ՛ք, լացէ՛ք, ապաշխարեցէք որ մի գուցէ Աստուած կ'սղճայ ձեր չոճուխներին, հայու անմեղ գառնուկներին»։ Ա՛խ Մարօ, Տէր Կրպօյի արտասուքը սիրտերնիս մաշեց, կարծես թէ կռուի դաշտում լինէինք, բոլորս էլ լացինք, աղօթեցինք որ Աստուած խղճայ մեր վերայ ու ազատի այս գաղաններին ձեռքից։

Կարօն վշտահար ձեռքերը երկինք բարձրացրեց մի ինչ որ բան մըմնջաց, նայեց իւր երկու անմեղ գառնուկներին, որոնք հրեշտակի պէս փռուել ու պառկել էին, գնաց համբուրեց նրանց ու եկաւ նորից նստեցաւ ինձ մօտ։ Ես զգացի որ այդ համբոյրը սովորական համբոյրի չէր նմանում, այդ համբոյրը մի խորտակուած սրտի համբոյրի կ'նմանէր, մի կարօտակէզ սրտի համբուրի, որ շատ բան կ'հասկցնէր ինձ, ինձ պէս մի վշտահար կնոջ։ Այդ ամբողջ սրտածմլիկ տեսարանը ներկայացնելուց յետոյ էլ չկարողացայ զսպել ինձ, փաթաթուեցի նրա պարանոցով ու ասացի։

— Կարօ ջա՛ն, այդ ինչո՞ւ այդպէս ըրիր, ինչո՞ւ կուլտաս։

— Ես ինձ պատասխանեց։

— Մարօ ջա՛ն, իմ խելացի կնիկ, ո՞վ գիտէ աշխարհ է մէկ էլ պիտի տեսնե՞նք միմեանց։ Կնիկ, Աստուած օրհնեց մեր ամուսնութիւնը, մենք զաւակներ ունեցանք, ճակատի քրտինքով ապրեցանք, մեր օջախը վառ էր, բայց այսուհետեւ էլ չգիտեմ կնի՛կ, դու խելացի կնիկ ես, քո պատիւը պահի՛ր, պահպանիր, չ'լինի թէ յողթուիս, չ'լինի թէ քո պատիւը արատաւորես։ Եթէ տեսնես որ մեր գիւղը այրում կոտորում են այրելի՛ր, սպանիր ու սպանուիր։ սպանիր քո զաւակներին քո ձեռքով, ու մի ընկնի այդ մարդակերների ձեռքը։

Ա՛հ, այն գիշերն էր, այն գիշերն էր իմ վերջի մխիթարութեան գիշերը։ Մենք միասին հաց կերանք, ուրախացանք, ա՛խ Տէր, դիւանիտ տարգեհիդ մեռնի՛մ։ Ու սկսեց առանց գիտակցութեան երգել, իւր վիշտերը ամփքելու համար. երեւի իր ցաւոտ սիրտը մխիթարելու համար էր որ ինքն էլ չ'գիտեր թէ ի՞նչ է երգում։

Դարեր անցաւ, զուլում կուգայ երկնքից,
Զուլում կուգայ, արիւն կուգայ իւր կուրծքից
Էլ՝ զիշտ մնաց որ չ'քաշեմ ձեր ձեռքից,
Մէկ սէր ունի՛մ, այն էլ՝ խէք իմ կուրծքից։
Էլ ի՞նչ անենք, որին դիմենք ո՞վ Աստուած,
Միթէ դ՞ու էլ ես այդ գաղաններուց վախեցած,
Մեր դարդերից տնքտնքում են ապառաժները լեռները,
Մեր վէրքերից է որ հոսում է աղբիւրների ջրերը։

Մի տառ տուէ՛ք, աղաչում եմ,

Հայաստանի փրկութեան,

Մի բառ գտէք ողջ աշխարհում

Մի թշուառ մօր փրկութեան։

Դարեր անցաւ զուլում կուգայ երկնքից,
Արիւն կուգայ, արցունք կուգայ մեր կուրծքից
Էլ ի՞նչ մնաց որ չքաշենք ձեր ձեռքից
Մէկ վիշտ ունի՛մ, այն էլ պոկէք իմ սրտից։

Մարօն իւր սրտի թոյնը թափելուց յետոյ, խելագարի պէս այնպէս գոռաց որ երեխաները քունից արթնցան ու սկսեցին լաց լինել։

— Ո՛ւս կաց, զա՛ւակս, սո՛ւս կաց, թող ձայնդ չ'լսեն։

— Ո՞վ, հարցրեց Սոսը։

— Նրանք, զաւակս, նրա՛նք, այն մարդակերպ գաղանները, որոնք Հայի արիւն խմելով են զբաղուած։

Երեխան գլուխը վերմակի տակ կոխեց ու սկսեց դողդողալ։ Բայց կէս ժամ չանցած նորից երեխան քաջալերուելով գլուխը հանեց վերմակի տակից ու ասաց։

— Մա՛յրիկ, դեռ չեկա՞մ հայրիկս։ Ա՛հ թշուառ երեխայ։

— Ո՛չ զաւակս, դեռ չեկաւ, բայց կ'գայ, կ'գայ իմ թշուառ երեխայ, անպատճառ կ'գայ։

— Մա՛յրիկ, եթէ բռնեն նրանք հայրիկիս սպաննե՞ն, ի՞նչ կ'լինի մեր վիճակը. հապա մենք կարո՞ղ ենք առանց հայրիկի ապրիլ, չէ՞ որ ուրիշները հայրիկ ունին օ՞ք։

— Ո՛չ զաւակս, հայրիկդ քաջ է. եթէ նրանք սպաննելու փորձ անեն, նա էլ նրանց կ'սպանի. է՛հ, լո՛ւս կաց զաւակս, բերանդ խէյրով բաց արա։



Մուծն էր: Շատ մուծը, կարծես երկինքը խռովել էր երկրից, կարծես էր ցանկանում տեսնել մարդկանց երեսը, լուսինն էլ խռովել էր նրանցից. ասողերն էլ: Խորհրդաւոր էր այն գիւշերը. միայն թէ լուում էր բայդուշի ձայնը, որը իր չարագուշակ վույ-վույով երկրին մրափեցնում էր ան ու սարսափի տակ:

— Վայ ձայնդ անխճուի, անտէ՛ր մնաս, արդեօք լինէ չոր լուր ունիս, արդեօք սե՛ւ պիտի կապեմ, արդեօք իմ տանա դուռը սեւ քարով պիտի շարուի, աքաղաղն էլ կանչեց, Տէ՛ր, դո՛ւ ուղորմիս, դո՛ւ խղճաս այս անտէր երեխաներին. ինչ անեմ Տէ՛ր, ինձ մի ճար մի ճանապարհ ցոյց տուր...:

Նորից աչքերը լեցուեցան. նա ոչ թէ լաց էր լինում, այլ աւնիծում. անխճում էր մարդկութեանը, անխճում էր բոլոր Աշխարհին, որ իրենց ցաւերը տեսնում, բայց դարման չէին անում:

Մարօն լալով քիչ մը սիրտը հանգստացրեց, նայեց դէպի փոքրիկ լուսամուտը, որը ոչ թէ լուսամուտ էր, այլ աւելի շուտ մի տանջուած պատի ձեղք, որը կարծես թէ նայնքան ցաւօտ էր, որքան Մարօն: Լոյսը բացուելու վերայ էր. Մարօն գնաց կծկուեց երեխաների սաքերի տակ, ցանկանում էր չ'մտածել, ցանկանում էր քնանալ. բայց չէր կարողանում:

Նա քիչ մը աչքերը փակեց, յանկարծ մի ձայն ընկաւ ականջը, մի աղիողորմ ձայն որը կ'նմանէր բազէի ձեռքը ընկած թռուչունի ձայնի, որը իրեն էր կանչում. այդ ձայնը ասում էր.

— Մարօ՛, անդո՛ւթ կնիկ, դեռ աչքերդ փակւում են, դեռ կարողանում ես քնանալ, ինձ չե՞ս յիշում, չե՞ս կարծում որ ես ընկել եմ գազանների ձեռքը: Ինձ չարչարում են, տանջում են այնպէս՝ ինչպէս Հրեաները չարչարեցին մեր Փրկչին: Օգնի՛ր ինձ, օգնի՛ր անգութ կնիկ:

Մարօն ելաւ խեղագարի պէս, դէպի դուռը վազեց, վերցրեց դռան հետեւի մեծ փայտը, դուրս թռաւ դռնից կորցնելով իր

կանացի ամօթխածութիւնը, բայց ոչինչ չկար, այլ լուսացել էր: Նա յաղթուած դիւցազնի պէս ներս եկաւ խրճիթ, և կարծես այդ ցաւագար խրճիթն էլ էր ծիծաղում Մարօյի յաղթուելու վերայ: Նա գլուխը կախ ձգած մի քանի անգամ խաչակնքեց երեսը և մի ինչ որ ազօթք մը մնչաց:

Նա կ'ցանկար այն վայրկեանին թեւ տռնել, թռչել, գնալ նրա հետեւից. հապտ երեխաները սրի՛ն ձգէր. մէկին օգնել և երկուսին կորցնել՝ այդ էլ անկարելի էր:

— Ես մայր եմ, ասում էր Մարօն, մի թշուառ մայր. միթէ՞ մայրը կարող է իւր երկու աչքի լոյս զաւակների կորստեան պաճառ դառնալ:

Նրա սրտում կար երկու հարազատ սէր. մէկը իւր թագապսակի սէրն էր, հօր և անմոտանալի, իսկ միւսը զաւակներին, երկու անմեղ գառների, որի համար ահագին մայրական տանջանքի էր ենթակա եղել: Մէկը մէկից ցաւալի, մէկը միւսից կսկծալի:

Մէկ էլ մտածում էր. մէկին գիրկս տռնեմ, միւսին էլ թեից բռնեմ գնում այն սոսկալի ճանապարհով, ո՛ր ճանապարհով որ գընաց իմ մինուճար էրիկը: Կա՛մ կ'զանք նրա հետ մխտախ, կամ կ'մեռնինք այն տեղ որ տեղ ինքը մեռաւ: Չէ որ նա ինձ պատուիրեց. « Կնի՛կ, պատուիդ համար դո՛հի՛ր թէ քե՛զ, և թէ քո զաւակներին »: Եթէ ես նրա պատուէրը չ'պահեմ պատասխանատու կ'մնամ թէ նրա՛, և թէ նրա Աստուծոյ առաջ:

Մարօն դուռն եկաւ խրճիթից, տեսաւ որ երկիրը պայծառացել է. բարի լոյսը շագաղել է իւր մէջ այն դարաւոր քարուկոյտերը, որոնք համր և լուռ վկաներ էին Հայի քաջած տառապանքներին: Նա նայեց, երկար նայեց այն ճանապարհին, որ գնացել էր իւր խեղճ ամուսինը ու ասաց.

— Խօսեցէ՛ք դաշտե՛ր, խօսեցէ՛ք անգութներ, ո՞ւր մնաց իմ մտաւը, իմ ջանը արդեօք ճի՛շդ էր տեսած երազս, արդեօք թեւիս փոխարէն քա՛ր է դրել գլխի տակ, արդեօք ո՞ր քարի, ո՞ր ձորի տակ է ընկած անտէր անօգնական: Արդեօք կանչե՞ց իրեն զաւակներին, արդեօք ասաց անգութ կնիկ, դու իմ թագն ու պսակն ես, դու խոտաղար Եկեղեցում որ ինձ հաւատարիմ լի-

նես, ինձ կողակից լինես, օգնես ինձ իմ նեղ գրութիւններում, խօսեցէ՛ք, խօսեցէ՛ք անգութ դաշտեր ու ձորեր, չ'տեսա՛ք, եթէ ինձ չէք խղճում, խղճացէ՛ք իմ անմեղ գառնակներին, որոնք հիմա կ'արթնան և կ'հարցնեն. «Մայրիկ, չ'եկա՞ւ հայրիկս», ի՞նչ պատասխանեմ: Լուռ են, լուռ են ամենը, չեն ցանկանում պատասխանել մի կնոջ, որը անէծք է թափում իրենց գլխին, չեն լսում մի կնոջ որի սրտից հոսում է արիւնը, հարազատ և թարմ արիւնը, որի սիրտը լիքն է հարազատ մայրական հոգիով, և որը որպէս ան արդար դատապարտեալ, արդար դատաւորան է պահանջում երկնքից ու երկրից:

Արեւը դեռ երկու մղրախ չէր բարձրացել, Մարօն մի բնական ջուր առաւ երեսը լուաց, ծռնկ չաքեց իւր մրմնջող սրտով աղօթք արեց, գնաց հանեց երեխաներին անկողնուց ու ասաց.

— Ելէ՛ք զաւակներս, ելէ՛ք պէտք է գնանք:

— Ո՛ւր, հարցրին երեխաները:

— Գնա՛նք զաւակներս, գնանք հայրիկիդ մօտ, գնանք Զատիկ տօնենք, գնանք սեւ զատիկ տօնենք, արիւնձող Զատիկ տօնենք:

— Բայց ինչո՞ւ սեւ զատիկ տօնենք մայրիկ, չէ՞ որ հայրիկը այնտեղ կ'լինի:

— Ա՛հ, լուռ կաց զաւակս, Հայը Զատիկ չունի: Դարեր անցաւ, մի քանի դարեր, բայց Հայը ազիզ օր չ'տեսաւ, նուիրական օր չ'տեսաւ: Այդ ազիզ օրերը եղել են մեր արիւնձող ներկուած, Հայի արիւնձող շողողում. ա՛հ զաւակս նայի՛ր, վեր կաց տեղէդ նայիր այն մութին որ բարձրանում է Սիփանայ վշտոտ, ցաւոտ լեռի կուրքից, լանջերից, այդ մութները անառնների չորցած փայտի մութները չեն, այլ մեր տառապեալ ազգի տան մութներն են, որը ո՛չ թէ մութ է, այլ բոլոր է զաւակս, անողոր բողո՛ք, որը բարձրանում է ամպերի մէջով, նա պիտի գնա բողոքելու, տակնուվրայ անելու այն Գահը, որը շուտ լսում է մարդկանց ցաւերը, վշտերի արձագանքները, բայց ուչ է կատարում: Ա՛հ զաւակս, երանի թէ ես լինէի այդ մութի տեղը, ես գնայի բողոքէի, արդար դատաւորան պահանջէի: Եթէ դեռ չգիւէ ցոյց տայի իրեն Հայի տառապանքը, Հայ կնոջ, Հայ մօր ցաւատանջ

սիրտը: Զաւակս, մեր դաշտերում էլ ոչ մի հատ սոխակի ձայն չի լսում, թռչունների ձայն չի լսում, լռել են, լռել են որովհետեւ այս կողմերում թագաւորում է մի ձայն, մի աղիոգորմ ճիչ, այն էլ պատուից զուրկ Հայ կնոջ ձայնն է, աղաղակող անօթի հայ մանուկի ճիչն է, որ թնդացնում է ամբողջ աշխարհը, որը նախատինք է կարգում մարգասէր Եորոպային: Ա՛խ, այլ եւս մի խօսիր զաւակս, թող որ քո մայրը մեռնի, խեղտուի վշտերի ու կիանոսում այնպէ՛ս, ինչպէս խեղդուեցան բաղմաթիւ մայրեր, իրենց վիշտերն էլ իրենց հետ:

— Հապա քո ասած մարդ դազանները մայրիկ, մեզ կ'բռնեն կ'սպանեն, մայրիկ վախում եմ...

— Մի՛ վախնաք անմեղ զաւակներս, Աստուած ձեզ կ'պահի կ'պահպանի, մանաւանդ որ ես ձեզ հետ եմ, հարազատ մայրը իրեն կեանքը կ'վտանգի իր զաւակներին փրկելու համար. քանի որ ես ողջ եմ, ձեզ բան չի՛ լինի մի վախնաք:

Կէս ժամ չանցած, Մարօն մէկ երեխան շալակը առած, միւս էլ ձեռքից բռնած, գնում էր համր և լուռ քայլերով որպէս նեւ էլ ձեռքից բռնած, գնում էր համր և լուռ քայլերով որպէս նեւ զացած մարգարէ ինքն էլ չգիտեր թէ ուր էր գնում, այսքանը գիտէր որ գնում է այն ճանապարհով՝ որ ճանապարհով գնացել էր իւր խեղճ ամուսինը, չիմանալով որ անգութ ճակատագիրը ի՞նչ կ'բերի իւր առաջը: Հարազատ հոգի կրող կինը չիվախենայ, նա հաղարուակէկ տեսակ վտանգը աչքի տակը կ'առնի, կ'գնայ իւր ամուսնու հետեւից, եթէ գիտնայ վտանգ կերպով որ իւր անմեղ արիւնը կ'թափուի, նորից չի վհատուի, որովհետեւ նա կապուած է իւր ամուսնու հետ Աստուածային կապով: Մարօն էլ որպէս այդպիսի հոգի կրող կին, գնում էր իւր ամուսնու հետեւից մոռնալով ամէն ինչ: Երկու ժամուայ ճանապարհ դեռ հազիւ էին հեռացել գիւղից, որ Սոսը մի ճիչ արձակեց, մի սոսկալի ճիչ, ու փաթաթուեց մօրը պարանոցով:

— Ի՞նչ պատահեցաւ զաւակս, ի՞նչ, ասա՛ մի լա՛ր, շո՛ւտ:

— Վախում եմ մայրիկ, վախում եմ, ասաց երեխան, ու ձեռքերը դրեց աչքերին որպէսզի չ'տեսնի:

— Ինչի՞ց, զաւակս, ինչի՞ց ես վախում, ես քեզ հետ եմ մի վախենար, ասա՛ դէ՛հ շո՛ւտ:

— Նրանից, մայրի՛կ, նրանից որ խորուած է այն ճահճի մէջ, Մարօն նայեց և ի՛նչ տեսաւ Աստուած դու ցոյց չտաս, Կարօն, իւր խեղճ ամուսինը, ձեռքերը ոտքերը կապած, ձգել են ճահճի մէջ, և մի մեծ քար էր դրել են մէջքին, այնպէս որ լեզուն կէս կանգուն դուրս էր ընկել:

Սիրելի ընթերցող գրիչս չի կարող նկարագրել այն ինչ որ պատահեցաւ այդ յուսախափ կնոջ հետ, միայն ազնիւ և անկեղծ հոգի կրող կինը կ'հասկանայ այս վիշտը իրականապէս:

Մարօն խելագարի պէս երեխաներին մի կողմ նետեց, դուռում գոչումով վերան վազեց, քարը մի կողմ նետեց, փաթաթուեց կարօտեալ ամուսնու պարոնոցով. իւր մազերն էր փեթթում, գլուխը քարին էր զարկում: Մարօն ծունկ չոքեց դիակի մօտ, կորիւնը կորցրած վիրաւոր արծուի պէս, աչքերը դէպի երկինք բարձրացրեց ու ասաց.

— Անիծուիս, երկինք, թող խաւարի այդ արեւդ, Հայը Արեւ չունի, ինչ որ կայ նրանցն է, նրանցը, ասողեր էլ նրանցն է, ա՛հ, պատու՛ւիր երկինք, կործանու՛ւիր, ինձ էլ կործանիր քեզ հետ, ողջ աշխարհին էլ. Հայը աշխարհ չունի. ա՛հ էլ ինչո՞ւ այսքան քարերը, երբ մարդկանց սրտերը քարերից ու ապառաժներից էլ կարծր են դարձել: Վեր կա՛ց, Կա՛րօ ջան, վե՛ր կաց Զատիկ տօնէնք, Հայի համար էլ Զատիկ է, Սեւ Զատիկ: Նայիր երեխաներիդ բերել եմ քեզ մօտ, ահա Վարդանուշը, ահա քո սիրական Սոսը. չե՞ս լսում, դո՛ւ էլ խռովեցար ինձանից երկնքի ու երկրի պէս. ա՛խ երանի փշուր փշուր լինէիր երկրի, քու ու միսիր դառնայիր. ո՛վ է տեսել հայրը մոռանայ իւր գաւառներին:

«Ա՛խ, նրանց նայեցէք, քարերն էլ մոռնում, ձորերը տնքտնքում, արտասուում են թուփերը, կսկծում դաշտերը: Դո՛ւք էլ արտասուեցէք գառնուկներս, Հայը ազիկ օր չունի, Հայը Զատիկ չունի:

«Կարօ դու մեռած ես, հայ, ո՞վ սպաննեց քեզ, ո՞վ ասա ինձ, ես քո կինն եմ, քո թշուառ կինը, խօսէ՛ իմ թանկագին թագ ու պսակ. ես կ'գնամ, կ'գնամ քո վրէժդ կ'լուծեմ. թո՛ղ սպաննեն, թո՛ղ ինձ էլ սպաննեն, թող երեխաներիդ էլ սպաննեն քեզ պէս. էլ ո՞րի համար ենք ապրում, ո՞րի. Աստուած մեզի օր

արեւ չի տուել: Զայն տուէք երկինք և երկիր, ո՞վ է յանցաւոր, ո՞վ. նորից Հայը. հապա ինչո՞ւ աշխարհ եկանք մենք, էլ ինչո՞ւ ստեղծեցիր մեզ, ձայն տուէ՛ք, խօսեցէ՛ք, հապա դուք արգար դատ ու դատաստան չունի՞ք, հապա ինչո՞ւ կանգուն էք, քանդուեցէք, խորտակուեցէ՛ք՝ ինչպէս խորտակեցիք մե՛զ, այնպէս էլ խորտակեցէք նրա՛նց, այն գազաններին, այնպէս՝ ինչպէս արեցիք մեզ անգթօրէն...:

Խեղճը արդէն խելագարւել էր:

Մարօն արդէն իւր գլխին մազեր չէր ձգել, քաշել հանել էր կաշիի հետ միասին և արիւնշաղախ էր եղել. նոյնպէս երեխաները, որոնք անմեղ գառների պէս ընկել էին հօր վիրաւոր վերքերի վերայ, ու կրկնում էին իրենց մօր խօսքերը.

— Հայրիկ ջան... վեր... կաց... Զատիկ... տօնէնք, Սեւ... Զատիկ:

Մարօն մէկ էլ լսեց որ ձիերի ոտքերի ձայն է գալիս հեռանից. երեխաների մէկը գիրկը առաւ, միւսն էլ շալկեց ու դէպի այն ձիաւորները գնաց. եւ ի՛նչ է տեսնում. գազանարարոյ Ահմէդ Մուստաֆայ բէյը իւր արիւնարբու զօրքերով գնում է Բ. գիւղը աւերելու, քանդելու, կողոպտելու:

Մարօն իւր երկու զաւակներով մահուան ուրաւականի պէս արիւնաշաղաղ վազեց ու տնկուեց նրանց առաջ, քանի ուժ ունէր գոռաց նրանց վերայ, անելով.

— Ծնե՛ր, անգութներ, անխիղճներ, իւր էք գնում, ո՞ւր, օճախներ քանդելու, պատիւներ պղծելու, անմեղներ սպաննելու. ո՞ւր է այն վրէժխնդիր Աստուածը որ ձեզ էլ պատժի, հիմայ, այո՛, այո՛ վայրկեանիս: Անաստուածներ առէ՛ք սրանց էլ սպաննեցէք, ինձ էլ սպաննեցէք այնպէս ինչպէս սպաննեցիք սրանց հօրը: Իմ կարօյիս արիւնի ձայնը վրէժ է պահանջում ձեզանից, վրէժ:

Անգութ աւազակապետը որ մինչեւ այն ժամանակ սպասած իւր բազմաթիւ արիւնարբու զօրքերով լսում էր որպէս հնադանդ աշակերտի, էլ չ'կարողացաւ դիմանալ այնքան յանդիմանութիւններին, որը ինչպէս կարկուտ թափւում էր մի «գիւլուր» կնոջ բերանից, հրամայեց գնդակահար անել:

Արիւնախում էսկիաներն էլ այդպիսի հրամանի էին սպա-
տում. բոլորը մի անգամից հրացանի առաջի գնտակը արձակեցին
մի ցաւերով լի, վշտի ձեռքից խելագար կնոջ վերայ, իրենց
յաջողութիւնը փորձելով:

Այդ ահուելի ձայնի, այդ դժոխային որոտումների միջից լըս-
ւում էր մի ձայն, մի խեղճուկ ձայն որ այսպէս էր ասում.

— Քարեր... ու ժայռեր... դուք... աւելի... գութ...
ուներք... քան թէ մարդիկ... մարդիկ գազանների... պէս...
միմեանցին են պատառոտում...

Ահ... մարդիկ անգութ են

Այս չար աշխարհում,

Աշխարհի դէկն է

Չար մարդկանց ձեռքում:

Այդ վերջի խօսքի հետ միասին կտրուեցաւ ցաւատար կնոջ
ձայնը որը կարծես թէ անհանգստութեան պատճառ էր դառնում
ամբողջ մարդկութեանը:

Միւս օրը Ս. գաւառի փրտակներում, մարդիկ էին շրջում
ու նոր Զատիկը աւետում:



Վ Ե Ր Ձ

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍԲ ՈՐՊԷՍ ՎԵՐՁԱԲԱՆ

Ազնիւ ընթերցողներ, Հայերը շատ են տեսել այսպիսի տո-
ներ, այսպիսի Զատիկներ, դարեր են անցնում բայց Հայի վի-
ճակը նոյնն է, նա միշտ դժնդակ է եղել, նրա հացը միշտ արիւ-
նոտ է եղել:

Ես համոզուած եմ որ Եգիպտոսի Հայ գաղութի մեծ մասը
այսպիսի վայրերից են եկել, եկել են այս տեղ աշխատելու, հա-
մով հաց ուտելու, մի խօսքով անցաւ սրտով ապրելու. բայց մի
մոռնաք սիրելի ընթերցողներ ու ընթերցողուհիներ, մի մոռնաք
այն սոսկալի վայրկեանները, որ կրակ էր թափուած երկնքից,
մի մոռնաք այն սոսկալի վայրկեանները, մի մոռնաք այն
օրերը որ Աստուծոյ էիք. «Աստուած, մեզ փրկութեան մի
նաք, մի ճանապարհ ցոյց տո՛ւր»: Վերջապէս մի՛ մոռ-
նաք ուր որ գնաք, ինչ դատարարի որ պատկանիք, հա-
սարակ ծառայ թէ աղա, իշխան թէ դատաւոր, մի մոռնաք
որ դուք ծնուել էք դարաւոր ցաւոտ երկրի արգանդից, վերջա-
պէս իմացէք որ Հայաստան չի նշանակում բուրաստան, այլ տան-
ջարան: Յիշեցէք այս Զատիկը և յիշեցէք ձեր Հայրենիքի Զա-
տիկը, մի մոռնաք որ նրանք կարօտ են, դուք ազատուել էք
բայց նրանք ո՛չ: Ամէն ազնիւ Հայի բարոյական պարտականու-
թիւնն է, չ'մոռնալ իւր հայրենիքը, և մի որոշ չափով օգնել
նրանց: Եթէ երկու գաւառի ունէք, հացը կէս արէք և ուղարկե-
ցէք այնպիսի վայրեր, ուր մինչեւ հիմայ էլ Զատիկները լինում
են արիւնոտ:

№. U.

№ 5925

11. 25.

№ 5925